

**ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Ուրախ ենք հաղորդելու, թե Առաջնորդ Սրբազան Հայրը իր սերտ յարաբերությունը կը պահպանե՛ց Մեծագոյն Լոս Անճելըսի մէջ գործող հայ կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն հետ:

Լոս Անճելըսի մէջ յայտնի է Գալիֆորնիայի Հայ Գրողներու Միութեան ազգանուէր եւ գրական ծառայութիւնները: Յունիս 23ին, 2010, Գալիֆորնիայի Հայ Գրողներու Միութեան Նախագահ՝ Տիար Գրիշ Դաւթեան, ընկերակցութեամբ Տիար Պօղոս Քիւրէլեանի, այցելեցին Առաջնորդարան եւ հանդիպում ունեցան Առաջնորդ Սրբազան Հօր հետ: Հանդիպման նպատակն էր Գալիֆորնիայի Հայ Գրողներու Միութեան կողմէ Կլէնտլըի Հանրային Գրադարանին մէջ Դեկտեմբեր 2ի երեկոյեան գրական երեկոյ մը կազմակերպել՝ նուիրուած Սրբազան Հօր հեղինակած գիրքերուն եւ հոգեւոր հարուստ գրականութեան:

Սրբազան Հայրը իր գնահատութիւնը յայտնեց յարգելի հիւրերուն՝ իրենց կատարած այս այցելութեան եւ համագործակցութեան համար: